

### 5.6. Շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մոնիթորինգ

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության բնական շրջակա միջավայրը 2004թ. հուլիս ամսին ունեցել է հետևյալ բնութագիրը.

**Օդային ավազանի վիճակի մոնիթորինգ:** Հանրապետությունում հուլիս ամսին 10 դիտակայանների միջոցով մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիթորինգ է իրականացվել Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի և Արարատ քաղաքներում: Փորձագնմվել է օդի 2153 փորձանմուշ:

- Երևան քաղաքում վերցվել է օդի 1358 փորձանմուշ: Որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ազոտի օքսիդի, օզոնի, քլորոպրենի և արոմատիկ ածխաջրածինների կոնցենտրացիաները: Փոշու և ազոտի երկօքսիդի պարունակության միջին ամսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՍԹԿ) գերազանցվել են 3.3-ական անգամ, ծծմբի երկօքսիդինը՝ 3.0, օզոնինը՝ 3.2, բենզոլինը՝ 1.9 անգամ: Ազոտի երկօքսիդի առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 4.1 անգամ: Հունիս ամսվա համեմատ բարձրացել են բենզոլի, փոշու և օզոնի միջին ամսական կոնցենտրացիաները, համապատասխանաբար՝ 1.6, 1.3 և 1.2 անգամ:
- Գյումրի քաղաքում փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 26 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.7 անգամ: Հունիս ամսվա համեմատ 1.3 անգամ բարձրացել է փոշու միջին ամսական կոնցենտրացիան:
- Վանաձոր քաղաքի երկու դիտակայանների միջոցով վերցվել է օդի 520 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.0 անգամ, ծծմբի երկօքսիդինը՝ 1.8 անգամ: Ածխածնի օքսիդի առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 1.2 անգամ: Հունիս ամսվա համեմատ 1.3 անգամ նվազել է ածխածնի օքսիդի միջին ամսական կոնցենտրացիան, իսկ ծծմբի երկօքսիդինը բարձրացել է 1.1 անգամ:
- Հրազդան քաղաքում հուլիս ամսից վերսկսվել են փորձանմուշներում ցեմենտի փոշու պարունակության դիտարկումները: Վերցվել է օդի 26 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 5.0 անգամ:
- Ալավերդի քաղաքում մեկ դիտակայանի միջոցով վերցվել է օդի 260 փորձանմուշ: Որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ածխածնի օքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 12.2 անգամ, փոշու և ազոտի երկօքսիդինը՝ 1.3-ական անգամ: Ծծմբի երկօքսիդի առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 1.9 անգամ: Հունիս ամսվա համեմատ 1.2 անգամ բարձրացել է ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան:
- Արարատ քաղաքում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 26 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.0 անգամ: Հունիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխություն չի դիտվել:

**Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ:** Հուլիս ամսին մակերևութային ջրերի նմուշառում կատարվել է Փամբակ, Դեբեդ, Ձորագետ, Մարցիգետ, Ախթալա, Հրազդան, Գետառ գետերից և Երևանյան լճից:

## 5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Վերցված փորձանմուշներից 8-ը ենթարկվել են 20 ցուցանիշի որոշման 160 փորձազննման, իսկ 6 փորձանմուշ՝ 26 ցուցանիշի որոշման 156 փորձազննման (14 փորձանմուշ ենթարկվել է 316 փորձազննման):

Դեբեդ և Փամբակ գետերից վերցված փորձանմուշներում գերազանցվել են միայն ամոնիում և նիտրիտ իոնների ՍԹԿ-ները:

Փամբակ գետում նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.3-5.0 անգամ, ամոնիում իոնինը՝ 3.6 անգամ, իսկ Դեբեդ գետում՝ համապատասխանաբար, 2.5-4.2 և 2.0-2.7 անգամ:

Յրազդան գետում՝ Դարբնիկ գյուղի մոտ ընկած հատվածքում, ինչպես և հունիս ամսին, դիտվել է արտակարգ բարձր աղտոտվածություն (ՍԹԿ գերազանցում 100 և ավելի անգամ)՝ լուծված թթվածնի պարունակությունը գետում կազմել է 1.7 մգ/դմ<sup>3</sup>:

Յրազդան գետում դիտվել է բարձր աղտոտվածություն (ՍԹԿ գերազանցում 10-100 անգամ).

- ամոնիում իոնով Դարբնիկ գյուղի և գետաբերանի մոտ ընկած հատվածքներում համապատասխանաբար՝ 60.0 և 17.5 անգամ, իսկ Գետառի գետաբերանի մոտ ընկած հատվածքներում՝ 18.2 անգամ,

- նիտրիտ իոնով՝ Գեղանիստ գյուղի և Դարբնիկ գյուղի մոտ ընկած հատվածքներում՝ համապատասխանաբար՝ 12.0 և 13.6 անգամ,

- ԹԿՊ<sub>5</sub>-ով՝ Դարբնիկ գյուղի և գետաբերանի մոտ ընկած հատվածքներում՝ համապատասխանաբար՝ 38.0 մգՕ<sub>2</sub>/դմ<sup>3</sup> և 21.8 մգՕ<sub>2</sub>/դմ<sup>3</sup> (15 մգՕ<sub>2</sub>/դմ<sup>3</sup>-ից բարձր աղտոտվածությունը համարվում է բարձր աղտոտվածություն):

Մյուս դիտակետերից վերցված փորձանմուշներում ԹԿՊ<sub>5</sub>-ի նորման գերազանցվել է 1.8-2.9, նիտրիտ իոնինը՝ 5.6-8.8, ամոնիում իոնինը՝ 3.3, նավթամթերքինը՝ 1.6-3.2, պղինձ իոնինը՝ 8.0-17.0, սուլֆատ իոնինը՝ 1.2-2.8 անգամ:

Երևանյան լճից վերցված փորձանմուշներում նիտրիտ իոնի նորման գերազանցվել է 8.6, ԹԿՊ<sub>5</sub>-ինը՝ 1.8, ամոնիում իոնինը՝ 4.7, պղինձ իոնինը՝ 10.0, նավթամթերքինը և սուլֆատ իոնինը՝ 1.2 անգամ:

Վերահսկվող մյուս աղտոտիչների կոնցենտրացիաները եղել են թույլատրելի նորմաների սահմաններում: